

ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ

IV

ՍԳԱՒԻՈՐ ԻԴԵՍԼԻՍ

(Յ. Յովհաննիսեան. Բանասեղծութիւններ. 1908 թ.)

«Որքան մարդ շատ է սիրում, այնքան
էլ տառապում է: Խւրագանչիւր հոգու
տառապանքների գումարը համապատաս-
խանում է նորա կատարելութեան առ-
տիճաննին»:

Ամբելի Յիօանակարանից:

Ա.

Նոր գեղք չէ Յովհաննէս Յովհաննիսեանը մեր գրա-
կանութեան մէջ. ընդհակառակը նա աւագագոյնն է արդի
բանաստեղծների շարքում և շատերի հոգեոր ծնողը:

Յիշում էք, ինչպիսի՞ յաջողութիւն գտաւ նա իր
1887 թուին հրատարակած Բանասեղծութիւններով, ինչ-
պիսի հետաքրքրութիւն շարժեց թէ մամուլի և թէ ըն-
թերցող հասարակութեան մէջ: Այդ այն ժամանակն էր,
երբ Ա. Շահազիզի քնարը արդէն վազուց լռած էր, իսկ
Ռ. Պատկանեանը հաղիւ էր լսելի անում իր հեգնող և
բողոքիչ ձայնը: Սպասում էին նոր բանաստեղծի, ինչպէս
մի նոր Մեսիայի գալստեանը, և ահա նա եկաւ-այդ-
բանաստեղծը՝ թարմ ոյժերով, նոր երգերով, անկեղծ
ոգեսրութեամբ, սրտաբուղիս մեղեդիներով, նա եկաւ
սէր աւետելու և իր ու ազգի սուգը ողբալու, կոշտացած
սրտեր փափկացնելու և գեղեցիկ գաղափարով ոգեսրե-
լու: Մամուլը միաբերան վկայում է բանաստեղծի տա-
ղանդը և ողջունում է նրա գալուստը. մի քանի քննա-
դատներին նա ուղղակի հիացմունք է պատճառում և,
օրինակ, ծանօթ գրագէտ լ. Բաշալեանը «Արևելքում

իր քննադատականի մէջ ասում է՝ «Հիւսիսէն, ձիւնազարդ ոլայծառութեանց ու գարնանագեղ տարածութեանց, համապարփակ մշուշի և ճառագայթարձակ արևու երկրէն կուգայ այս գիրքն, որ ձմրան վեհ դիւրութիւնն ու գարնան ժպիտն ունի, մշուշին սաստիկ մելամաղձութիւնն և կենսալի ճաճանչներն արփւոյն։ Հեռուէն կուգայ, այլ ինչքան մօտ է մեր սրտերուն։ Բանաստեղծութեան գիրք մը, բայց այս տեսակ բանաստեղծութեան գիրք մը երբէք չէր եկած Ռուսահայոցմէ *...»։ Բանաստեղծութիւնների ժողովածուն շատ շուտ սպառուեց և այն էլ ինքնաբերաբար, որը չտեսնուած երեսյթ էր մեր մէջ։ Աշակերտութիւնը և երկսեռ երիտասարդութիւնը բերան էր անում նրա «Հատիկը», «Աշուղը», «Գիւղի ժամը», «Սիւնեաց իշխանը» և արտասանում էր երեկոյթներին։

Յետոյ եկան՝ Ա. Մատուրեանը, Յ. Թումանեանցը, Ջաւադ Բալուղեանը, Լ. Մանուէլեանը, Աւ. Խոահակեանը, Դերենիկ Դեմիրճեանը, Շուշանիկ Կուրղինեանը և շատ ուրիշները, որոնցից մի քանիսը միմիայն կայծեր արձակեցին և ասուպի պէս անհետացան, մասցեալները թիւրիմացութիւն էին թէ մեզ և թէ իրանց համար։ Խոկ Յովհաննիսեանը շարունակում էր իր գործունէութիւնը մերթ ընդ մերթ երեալով մեր պարբերական հրատարակութիւնների մէջ՝ շարունակելով գրաւել ընթերցողների սրտերը և ազդել աւելի երիտասարդ բանաստեղծների վերայ։ Աւ. Խոահակեանը արդէն ինքն է խոստովանում, որ նա Յ. Յովհաննիսեանի աշակերտն է, մեծ է Յովհաննիսեանի ազդեցութիւնը և Ա. Մատուրեանի վերայ։ Շուշանիկ Կուրղինեանը եթէ չի ազդուել Աւ. Խոահակեանից, անտարակոյս ազդուել է նրա ուսուցչից, որ և

*) Տես Արեւելք, 1887 թ. № 1134. նոյնպէս՝ Ա. Մանդինեանի մատենախօսութիւնը Աղբիւրի 1888 թ. № 4., Ա. Քալանտարի, Ա. Աղայիանի. Գ. Ենգիբարեանի եւ այլոց յօդուածները ժամանակից պարբերական մամուլի մէջ, Ալ եւ ուսերէն յօդուածներ՝ Ա. Միկազյանց, «Современ. армян. Поэты» 1903. եւ իմ յօդուածը Արմանս. Բելլետристы т. II.

վկայում է Յ. Մալխասեանը։ Յովհաննիսեանի քնարի հընչիւնները քանիցու արձագանք են գտել և միւս երիտասարդ՝ բանաստեղծների երկերի մէջ։

Այսպէս մեր նորագոյն բանաստեղծութեան ռահմական գրաւեց իւր պատուաւոր տեղը մեր գրականութեան պատմութեան մէջ և յօյս ունենք ընդ միշտ, զի

Միայն այն կապը որ միշտ է անմահ—

Սուրբ գեղեցկութիւն և սուրբ գաղափար։

Վեհ միտքը աղատ կենդանի կմնայ

Ու մէքն անձնազոհ՝ խեղճ եղքօր համար։

Բ.

Գեղարուեստի մասին տիրող կարծիքներից գուցէ ամենից լնդուն ելին այն է, որ դա մի գործունէութիւն է, որի միջոցով մարդու ուրիշին հաղորդակից է անում իւր զգացմունքներին, վարակում է նրան իւր տրամադրութեամբ, մասնակից է անում այն գաղափարական պրոցեսին, որ և կատարում է հեղինակի ներքին աշխարհում*)։ Քննադատութեան գերը գեղարուեստի վերաբերմամբ վերին աստիճանի բազմակողմանի է և այդ չի վրիպել քննադատների հայեացըից։ Ֆրանսիացի նուրբ գրիչներից մէկը**) այդ առթիւ իրաւացի կերպով նկատում է. « քննադատութիւնը վերին աստիճանի բազմատեսակ է լինում, նայած թէ ինչ առարկայ են ուսումնասիրում, ինչ տեսակ ուղեղի տէր է ուսումնասիրողը և կամ վերջինս ինչ տեսակէտ է ընտրել։ Քննադատութեան օրիէկտ (առարկայ) կարող է լինել և մարդը, և երկը, և գաղափարը։ Նա կարող է դատաստան տեսնել և կամ միայն մեկնութիւն տալ»։

Ժամանակակից ամենահոչակուած քննադատ Բրան-

*) Տես ի միշտ այլոց 1. Տօլստոյի՝ « Խ՞ոչ է գեղարուեստը » աշխատութիւնը։

**) Տես Պոլ Բուրժէի « Ժամանակակից հոգեբանութիւնը » և Ժիլ Ամետըի կարծիքը Պ. Բուրժէի մասին։

գէսը կողմնակից է վերջին տեսակի քննադատութեան։ «Նորագոյն քննադատութիւնը—ասում է նա—սովորաբար հանդէս է գալիս ոչ որպէս գատաւոր, այլ որպէս մեկնաբանող և բացատրող»։ Անձնապէս մենք միշտ գերադասութիւն ենք տալիս նշանաւոր Դանեմարկացու կարծիքներին թէ գեղարուեստի, թէ գրականութեան և թէ քննադատութեան վերաբերմամբ։

Այս ըոպէիս էլ մեզ հետաքրքրողը ոչ այնքան Յ. Յովհաննիսեանի տաղանդի չափն ու յատկութիւնն է, նրա բանահիւսական արուեստը, կամ նրա բռնելիք տեղը մեր գրականութեան մէջ, այլ այն, ինչ որ ամէն մի մարդու մէջ,—իոկ տաղանդի մէջ գերազանցօրէն, —լաւագոյնն է համարւում՝ նրա աշխարհայեցողութիւնը, նրա այն անտեսանելի ներքին կեանքը, որի տեսանելի և ըմբռնելի արտայայտութիւնն են նրա ոտանաւորները։ Սակայն այն էլ կայ, —և բանաստեղծները այդ լաւ գիտեն—որ լեզուն, խօսքը անկարող է անվիշտ և անխարդախ արտայայտել այն, ինչ որ մարդուս սրտի խորքումն է կատարւում, նեարդերի ցնցումների, մտածողութեան փայլակների միջոցով... Եւ միթէ իրաւացի չէ բանաստեղծը,*) երբ ասում է՝

Какъ сердцу высказать себя?

Другому какъ понять тебя?

Пойметъ ли онъ, чѣмъ ты живешь?

Мысль изреченная есть ложь.

Взрывая, возмутитьключи:

Питайся ими и молчи.

Բառերը ներքին յոյզերի ստուերներն են—և ահա այդ անկատար գործիքների վերայ նուագուած եղանակներն են, որին մենք ունկնդիր ենք լինում։ Ի՞նչ են երգում այդ մեղեդիները, ինչպէս են երգում. ուր են մեզ տանում, ինչ են մեզ ներշնչում, ի՞նչ են աւետում։ Յովհաննիսեանի բաղմահնչիւն սիմֆոնիայի վերայ կարծես իշխում է մի ալեկոծ եղանակ—դա հազարերանդ կեանքն է։

Ի՞նչ է կեանքը—հարցնում է բանաստեղծը և պէս-

*) Андрей Бэлый. Տես Եես ամսագիրը;

պէս համեմատութիւններով պատասխանում է՝

Խաղալիք ես դու նենդաւոր բաղդի
Հողմավար նաւակ ալեծում ծովում,
Անհանգիստ թռչնակ մի վարանգի,
Պարզամիտ տղայ փորձութեան բովում . . .

Մի անմիտ երևոյթ է և մենք նրա ձեռքին խաղալիք՝
Գետի երեսն ընկած տաշեղ՝
Մենք գնում ենք հա առաջ.

Ես կասէի՛ ջրվէճի գլխից քցած տաշեղ, որ հորձանքի
Միջից լոյս աշխարհ չեկած—չքանում, ոչնչանում է «փըր-
փրագէղ ալեաց միջին» Այդ միտքը նա յայտնում է
«Աւերակ»ի մէջ, որին նման է և մեր կեանքը՝

Ու, այսպէս ողջ մեր կեանքն է վաղանցիկ,
Ողջը լոկ ծալը է անսիրտ բնութեան
Եւ սէր, և հրճուանք, համայն գեղեցիկ
Զոհ է աւերի և մոռացութեան:

Մահը իրիւ մի սարսափելի ուրուական կանգնում է
Նրա առաջ՝ մահը, որին ամէն ինչ զոհ է բերում բնու-
թիւնը՝ և կեանքի ծաղիկներ, և սիրոյ համբոյր, և անհուն
պատրանքներ, «Կը գայ ժամը» (Երկու համբոյր) ասում
Է բանաստեղծը—

Եւ անա գունատ մահը կը զըռշմէ
Եւը սառն համբոյրը մեր սառ շըթունքին,
Եւ գիտեմ, որ նա պիտի չըլսարէ
Մեզ փաղաքշելով իւը անկեանք կուրծքին:

**Եւ մինչև իսկ անմահ մտքի ծնունդ իդէալը «չքա-
նալու է ծուխի նման» (Գեղեցիկ օրեր):**

Մահը, այդ արարաշխարհ սարսափեցնող անիմանալի
անյայտը, նրա անխուսափելիութիւնը—ընկճել է և յոռե-
տես է դարձրել բանաստեղծներից շատ շատերին. Զօլայի,
Մօպսասանի, ապա դէկադէնտերի և արդի մօդէոնիստ-
ների գրուածքներում նա կենդրոնական և գերակշռող
տեղ է բռնում. դա ըստ Արսէնիկի «Ժամանակակից հո-
գեկան տրամադրութիւններից մէկն է», որից զերծ չէ
մնացել և յեր բանաստեղծը:

Բայց միթէ միայն մահուան անխուսավիելիութիւնն է, որ մարդուս յուետես է դարձնում. ոչ, Հարկաւոր է միքիչ շրջահայեաց և զգայուն լինել տեսնելու համար, որ մարդուս կեանքը ինքն ըստ ինքեան via dolorosa՝ է Կեանքը ստութիւն և դառնութիւն է: Ամբողջ երկ-

բագունզը

Մի ըուսը ցեխ է. լոկ ուրուական է—ամբողջ ստեղծագործութիւննը *)—

ասում է Յովհաննիսեանի սիրած բանաստեղծներից մէկը—Լէօպարտինս Կեանքի այդ ունայնութիւնից ճնշուած մեր բանաստեղծը վհատ հոգով իր շուրջն է նայում և տեսնում է միայն

... Կարիք և զրկանք

Եւ ստրկութեան ճնշող շղթաներ:

Ոչ աղնիւ զգացմունք, ոչ յստակ սիրոյ նշոյլ. ուրեմն ինչպէս կարող է բանաստեղծը սիրոյ և վայելքի երգեր յօրինել: Թմրութիւնը, քնէածութիւնը—ընդհանուր է, կարծես հէքեաթի մէջ պատմուած կախարդական քունն է պատել համայն մարդկութեան: Եւ ինչպէս որ Յովհաննիսեանի ժամանակակից բանաստեղծը դիմում է «Պոյետաին ասելով»

Թող քո երգում եռայ հուրը բարկութեան,

Թող երգդ այրէ հոգի անկեղծ արցունքով,

Թող արձադանք լինի աղնիւ ցանկութեան,

Ոգեորէ հայրենիքի սուրբ սիրով:

Թող երգդ հնչէ, որպէս վտակ կարկաչուն,

Որ սահում է մեղմ յորձանքով արծաթի,

Որպէս աղքեւը եռուն յոյսել, ցանկութիւն,

Եւ ոյժ լսուե և մի ծիծառ կենդանի: . . .

Այնպէս էլ հայ բանաստեղծը «Աշուղ աից է սպասում ոգեորութեան երգ, որը մարդկութեան յարութեան փողը պիտի լինի»

Ասի աշուղ, առ չունդութը մեզ բան ասա՛ սրտալի.

Կարօտ ենք քու անուշ ձէնին, մի բան ասա՛ սրտալի.

*) A se setssօ—ստանաւորից:

Սրտի խօսք ենք ու զում քեզնից, որ վեր հանի մեր հոգին...
 ... Առ չունդութք գ, տուր լարերին, կըրակ վառիք մեր
 սրտում,
 Մեղ ամէնիս նոր շունչ տուող մի բան առա սրտալի:

Ք.

Զարմանալի չպէտք է թուայ, որ Տ]X-րդ դարու վերջի
 ուսւ բանաստեղծների (Նադսօնի ու Պէշչեի) և Յ. Յով-
 հաննիսեանի մէջ յաճախ մեծ նմանութիւն ենք տեսնում.
 Հետ նրանք ժամանակակիցներ են, մի կուլտուրայի զա-
 ւակներ, միևնոյն տրամադրութեամբ համակուածները Յով-
 հաննիսեանը ծնուել է 1864 թ., Վաղարշապատում, ուր
 և անց է կացրել իր մանկութիւնը: Յետոյ նա անցնում է
 Մոսկուա՝ Լազարեան Ճեմարան և համալսարան, որը
 աւարտելուց յետոյ, 1888 թ. վերադառնում է հայրենիք:
 Այստեղ ուսուցչական պաշտօնով նա մինչև այսօր էլ գրեթէ
 անընդհատ շարունակում է մնալ, մի տեսակ ֆէնիկս
 ներկայացնելով իւր շրջապատող գիւղական հասարակու-
 թեան մէջ... Նա իւր աշխարհայեցողութիւնը կազմակեր-
 պում է Լազարեան Ճեմարանում (որտեղ աշակերտել է
 Ա. Շահազիզին), համալսարանում, մայրաքաղաքի ինտէլի-
 գէնտ մթնոլորտում, հայ և օտար գրականութեան ազ-
 գեցութեանց տակ: Մանաւանդ տպաւորիչ պէտք է լինէին
 ուսւսաց կեանքը և գրականութիւնը, որ հեծում էին
 հասարակական—քաղաքական դաժան պայմանների ժա-
 նիքներում: Կարծես վերահաստատուել էին Պօղոս և Նի-
 կողայոս կայսրների ժամանակները, կարծես Ցըրանսիական
 Մեծ Յեղափոխութիւնից յետոյ տիրող Մետեղնիսեան
 շրջանն էր կենդանացել... Դա այն ժամանակն էր, երբ
 Աղէքսանդր Ա-ի սպանութիւնից յետոյ Լօրիս-Մելիքովին
 փոխարինում է Ռուսիոյ չար հրեշտակ Պոբեգոնոսցեւը և
 անխնայ հալածանք է սկսում ազատ մտքի ամէն մի արտա-
 յայտութեան դէմ: Յետադիմութիւնը իւր խրախնանն է
 կատարում թէ հասարակական կեանքում, թէ գրականու-
 թեան մէջ և թէ դպրոցներում: Ոստիկանութեան կամա-

յականութիւնը օրէնք է դառնում, իսկ Շլիսէլբուրգի քերդը ազատութեան բռնաբարութեան մի սիմբոլ . . .

Կոխ և բողոք արտայայտողները կամ Աիրիր էին քշուած կամ արտասահման փախած, Ընդհանուր հեծկըլտանքների արտայայտիչ հանդիսանում էր տաղանդաւոր նադսօնը, որ մեր Դուրեանի նման շատ շուտ գերեզման իջաւ.

Բայց յոռեան լինելու մի ուրիշ, գերագոյն, պատճառ ևս ունէր հայ բանաստեղծը — դա հայրենիքի դառն վիճակն էր: Հարկաւոր չէ թերթել Ալիշան, Պատկանեան կամ Շահաղիդ ծանօթանալու համար այդ վիճակի հետ. ինքը Յովհաննիսեանն էլ, նրանց տաղանդաւոր աշակերտը և անմիջական շարունակողը, այնքան գեղեցիկ, գունաւոր և հարսւոտ սիմբոլներով պատկերացրել է մեզ ազգի դրութիւնը: Ահա խոր հառանչանքի և վիրաւոր զգացմունքների — սիրոյ և վշտի զգացմունքների — գեղեցիկ արտայայտութիւն, մի Stabat Mater հայ բանաստեղծութեան մէջ՝

Դաքերով լացիր, ով մայր հայրենիք,
Եւ արիւնահոս վէրքերըդ ցարդ բաց,
Անվերջ տանջանքիդ ահաւոր գաղտնիք
Անարցունք աչքեց պահում ես ծածկած . . .
Մահամերձ հիւանդ՝ անփառք ապրեցար,
Հալւումես կամաց դու մոմի նման.
Դու կայծեր տուիր, խարոյկ չունեցար,
Գընում ես դէպի անխաչ գերեզման . . .

Հայրենիքը, այդ վերացական գաղափարը մարմանում է բանաստեղծի գրչի տակ, հոգի է առնում, որպէս զի . . . գնայ դէպի անխաչ Գողգոթայ: Եւ այդ այն պահուն, երբ բախտի վառ աստղը ժպտում է բոլոր ուրիշ աղգերին, երբ նոր կեանքի համար յարութիւն են առնում Յունաստան, Խտալիա, Բոլղարիա.

Եւ միայն դու ես, իմ խեղճ հայրենիք,
Որ շղթայակապ հեծում ես դարձեալ,
Եւ պատառ պատառ կուրծքըդ գեղեցիկ —
Ըսկած ես որպէս կենդանի մեռեալ . . .
Եւ անցած փառքիդ աւելակներից

Փրկութեան սսաը դեռ չէ կանաչում,
Կը ծքեցդ հոսած արեան շիթեքեց
Քո տանջանքների փունջըն է ցօղուում:

Գուցէ հեղինակը չի էլ յիշում, որ նոյնպիսի պատկեր
դարեր առաջ տուել է Պետրարկան իւր Խ-րդ Կանցօնում,
իսկ ՏԻՒ-րդ դարում Լէօպարդին իւր «Խալիային» օդայի
մէջ։ Խտալացի հայրենասէրների մտապատկերը վերստեղա-
ծուեց հայ հայրենասիրի բանաստեղծութեան մէջ։

Եւ մինչ մարդուս գոյութիւնը բախտի խաղալիք է,
իսկ վաղանցուկ կեանքը լսկերչ եսականութեան ասպարէզ,
մինչ ամբողջ ազգը մատնուած դարաւոր ստրկութեան,
կարծես իւր վերջալուսի հառաջանքներն է արձակում—
անտարբեր բնութիւնը գալիս է թափելու իր գարնանային
վարդերը, սոխակի երգերի և սիրայոյզ համբոյրների ակ-
կոմպանիմէնտով։ Բանաստեղծը, բնութեան սիրահար բա-
նաստեղծը, բողոք է բարձրացնում բնութեան այդ անար-
դարութեան դէմ,

Ո՞ւր ես գալի, այ գարուն . . .

Զուր ես գալի, այ գարուն . . .

Այս «Նոր գարունը», ինչպէս նաև «Այ վարդ-աղջի-
կը», «Արագի Եկաւը ու «Ալագեազ բարձր սարին»ը, իմ
կարծիքով, Յովհաննիսեանի ամենայաջող բանաստեղծու-
թիւններն են, որովհետեւ նրանց մէջ նա կարողացել է
գնել ոչ միայն իր գարդոտ հոգին ու մաշուած սիրտը,
այլ և ժողովրդի տառապանքն ու վիշտը։ Զպէտք է մոռ-
ուանալ, որ Յովհաննիսեանը գիւղացու որդի է և ինտէլեւ-
գէնտ դառնալով, նա չի խզել իւր կապերը ոչ գիւղի, ոչ
գիւղացու, ոչ էլ հողի հետ։ Բնութիւնը նրան նոյնքան մօտէ,
որչափ և իւր համագիւղացուն։ Իւր վշտերով և ուրախու-
թիւններով նա զարմանալի կերպով կարողանում է ձուլուել
ժողովրդի հետ, երգել նրա եղանակներով, զգալ նրա
զգացմունքներով, խօսել նրա պատկերներով։ Ահա այստեղ
է ծնունդ առնում մեր իսկական ազգային պօէզիան, որի
մէջ արտափայլում է մեր ժողովրդի ինքնատիպ պատկերը
իր ազգային յատկանիշներով։

Դ.

«Նոր զարուն» ստանաւորի մէջ բանաստեղծի յոռետես տրամադրութիւնը իւր գագաթնակէտին է հասնում և ապա սկսում է կրիզիսը՝ հեղինակի ներքին աշխարհում կատարւում է մի խոր և սրտամաշ հոգեկան ողբերգութիւն։ Տեղի է ունենում խուլ կռիւ բանաստեղծի խառնուածքի, բնածին յատկութիւնների՝ մի կողմից, և կեանքի արհաւիրքներից առաջացած տրամադրութեան մէջ—միւս կողմից։ Մարդկային վիճակը, շրջապատի արիւն—արցունքը նրան թելադրում են անիծել կեանքն ու գարունը, գանգատ բառնալ բնութեան և ճակատագրի դէմ, մահը գերադասել կեանքին . . . Այդ ճանապարհը կտանէր բանաստեղծին անյօյ յոռետեսութեան, ինչպէս, օրինակ, տարել էր Լէօպարդիին, Դուրեանին, տիկին Լուիզ Ակկէրմանին, որոնց բանաստեղծութեան մէջ յուսոյ և լուսոյ ոչ մի նշոյլ չկայ. «Ես չեմ ասի մարդկութեանը— առաջ ընթացիր. Ես կասեմ նրան՝ մեռիր, որովհետեւ ոչ մի յառաջադիմութիւն չի լաւացնի քո վիճակը երկրիս վերայ. Ամէն ինչ դէպի վատն է գնում աշխարհներից այս վատթարագունի մէջ. ոչ թէ դժոխքի գոների, այլ կեանքի շէմքին հարկաւոր է գրել Դանտէի «թող ներս մտնողները թողնեն իրանց յոյսը խօսքերը», ահա տիկին Ակկէրմանի գաւանանքը։

Դուրեանական հիասթափութիւնից և անհուն յոռետեսութիւնից Յովհաննիսեանին փրկողը նրա առողջ բանականութիւնն է, լաւատես ընաւորութիւնը, իդէալիստ ոգին, գուցէ և ֆիզիքական առողջութիւնը։ Սկզբում նա տատանւում է, տարակուսանքի մէջ է՝

Եւ պիտի հասնեմ մի օք փարոսին
Կեանքի կատաղի հոսանքից փրկուած . . .

Հարցնում է նաւորդը։

Ել պիտի ծաղկի՛ կուրծքը սարերի,
Արդեօք կը տեսնեմ աղբիւներն յատակ . . . թուման

Հարցնում է տնաւեր պահպախար»

Ե՞րբ մեզ համար պիտ կանաչի ձեթենին.

Այս, այն արդեօք կլինի՝ տարի նոր գարնան . . .

Հարցնում է երազախարը:

Մահամերձ մօր-հայրենիքի բերանն էլ նա նոյնպիսի հարցեր է դնում»

Նայում ես—արդեօք չե՞ն ցոլայ աստղեր,

Խաւար անապատն ահեղ կայծակով

Չի՞ լուսաւորութել արդեօք առաջիկ . . .

Չի՞ վառութել արդեօք այգը վառաւոր . . .

Եւ առաջ քան գրական պատասխաններ տալը այս հարցերին, բանաստեղծը «վ գիտէ ինչպիսի մտատանջութիւնների մէջ է ընկել, ինչպիսի ներքին կոիւ է ունեցել իր «ես»ի յուետես կիսի հետ։ Հեշտութեամբ չեն գրւում այսպիսի տողեր՝

Թէպէտ խեղդուած եմ ես դաժան վշտից . . .

Թէպէտ մինչ այսօր խարուած եմ կեանքից . . .

Թէպէտ դաւնութեամբ է հոգիս լցուած . . .

Բայց դու մի՞ յեշեր եմ դառն վիճակ,

Խաբի՛ր ինձ դարձեալ եկեղ ցնորդով։

Ինքնախարէութիւն, ինքնամոռացութիւն—ահա ինչ ճանապարհով է նա գնալու, որ չընկնի անդարձ յուսահատութեան անդունդը . . . Եւ կոիւը վերջացած է՝ իդէալիսը թէպէտ սգաւոր, բայց յաղթող է դուրս գալիս այդ ճակատամարտից։

Եւ ուրիշ կերպ չէր էլ կարող լինել, քանի որ բանաստեղծի բնութիւնը, ֆիզիքան, մինչև իսկ այս սգի բոպէներին սէր և ուրախութիւն է պահանջում։—Եւ այդուժեղ և հրամայող, բայց բնական պահանջին նա անձնատուր է լինում մերթ հասարակ ժողովրդի պարզութեամբ («Արազն եկաւ» և «Ալազեազ բորձ սարին», որոնց մէջ խանդավառ սէրը գրկախառնուում է եարէ կարօտով), մերթ հելլենական կենսուրախութեամբ կամ արևելեան անհոգութեամբ։ Այս տուիք ինձ քաղցր մի քուն. Զինադ մանուկ. Արի իմ հոգեակ, իմ զիրկը արի. և կամ նրա

Երզը, իր պարսկական գունաւորութեամբ՝ և յայտնի
տունով՝

Իրաւունք տուր՝ ծծեմ մեղը շրթունքիդ,
Քաղեմ կարմը այդ վարդերը թշերիդ.
Ով որ առնի հոտը շամամ ծծեցիդ,
Ել կարո՞ղ է թէ մի գին տայ իւր կեանքին:

Բնաղդը, բնութիւնը չի կարող խարել՝ ցաւն ու վիշտը,
ասկէտիզմը—չեն կարող բնական լինել. ուրիմն աշուղի
ասածի նման

Զախորդ օրերը ձըմբան նման կուգան ու կերթան
Վհատելու չէ. վերջ կունենան՝ կուգան ու կերթան.

Կմնայ մագկութեան առաջնորդ գաղափարը, որ լոյս
աշխարհ կհանի մեզ և մենք՝

Հաւատում ենք, թէ կը գայ օր
Քաղդը երազ չի թուիլ մեզ,
Թէ կը բացուի նա փառաւոր
Առաւոտեան վառ շողի պէս:

Թէ կը ցամքի գառն արտասուք
Լոյս կգառնայ այս սև գիշեր,
Կը փարատուեն կսկիծ և սուկ—
Կը գայ մայիս շնորհաբեր:

Յանուն այդ ապագայի, որին հաւատում էր և գեր-
մանացի յոռետես բանաստեղծ Լենաուն երբ ասումէր՝

Մեր տանջանքները նոր սերունդներին
Պէտք է աւետեն լաւագոյն կեանքի լուրը:

Յանուն այդ լաւագոյն կեանքի—չպէտք է վհատիլ:
Եւ բանաստեղծի բերնից խրախոյս է, որ լում ենք՝

Մի՛ վհատիր, եթէ աւեր
Եւ սուգն ընկաւ քեզ բաժին.
Թող ստրկութեան մռայլ գիշեր
Ահ չբերէ քո սրտին:

Նա թարգմանում է Պէշէի յայտնի «Վորեծъ, дружъ»
ոտանաւորը և ինքն էլ ընկնում է նրա ազգեցութեան
տակ և զանազան վարիացիաներով կրկնում է՝ «յուսա».

«Հաւատամար», «մի վհատիր», «քաջալերուիր», «յառաջ գնմ»
(28, 121, 127, 151 և այլ երեսները) հաւատալով, որ

• • • Կ'անցնի խաւար
Կը վառուի կրկնն յուսոյ արշալոյն,
Եւ ցանկալի օր կը գայ մեզ համար,
Կը շողայ բախդի ժպիտ սիրայոյզ • • •

Նա բացառութիւն չի անում և իւր մահամերձ ու
շղթայակապ մայր-հայրենիքի համար, ու՝ ազգի տառա-
պանքներին հաւասար, բուռն զգացմունքով ու երիտասար-
դական ոգեսրութեամբ կոչ է անում՝

Մօտ է ժամանակ, զարթե՛ր, սիրելիս,
Փրկութեան աստղը վառուում է ճակտիդ:
Ոտքի եւ հոգիս, շղթագ թօթափե՛ր,
Աչքը բաց արա այդ մահուան քընից.
Թէև մահամերձ, դու մի ձայն հանի՛ր.—
Արդիիդ օգնութեան կը գան չուս կողմից,

O pia fraus!

Ե.

Լուսաւոր ապագայի վառ յոյսը, այն անկեղծ հաւա-
տը, որ մարդկութիւնը վաղ թէ ուշ կվերածնուի՝ տալիս է
Յ. Յովհաննիսեանի բանաստեղծութիւններին մի տեսակ
առանձին վեհութիւն, կրօնական վսեմութիւն, Այդ լաւա-
տեսութիւնն է, իդէալիստական աշխարհայեցազութիւնը,
որի տիեզերական թարդմանը հանդիսացաւ Մեծ Տառա-
պեալը, Նա էր, որ համոյն մարդկութեան ցաւերին ցաւա-
կից, անեղբ վշաբերով տանիուեց, բայց երբէք վհատու-
թեան խօսք լերնից չհանեց՝ այլ միշտ յուսադրեց, թէ
սիրոյ յաղթանակով մարդկային կեանքն էլ դրախտ կդառ-
նայ։ Սէր, միմիայն փոխադարձ սէրն է, որ հաշտեց-
նելու է եղբօրը եղբօր հետ (14 Յուն. 1895 թ.), նա
մաքրելու է արցունքի ովկիանոսը և երջանկութեան բու-
րաստան է դարձնելու տառապանքների անապատը։
Կարդացէք Միլոյ գիրքը . . . Մինչև իսկ սիրած կռւոի

անբիծ սէրը բանաստեղծը պատրաստ է զոհ բերելու
«ճակատագրի խորթ որդոց» երջանկութեան՝ գուցէ դրա-
նով կ'կարողանայ

... արցունքը ցաւած աչերից

Մաշուած ճակատից թախիծը խլել.

Եւ նա մէնակ չէ, նա զգում է («Զատիկ» բանաստ.),
որ ամբողջ՝

Խռովայոյզ միտքը մարդկան

Բսպասում է այն օրին,

Երբ սէրը մեծ ու անվախճան

Պիտի յառնէ վերատին:

Սէրը—անմահ է, մէկ անգամ որ նա գերեց սիրաք
մարդկային—նա չի մեռնի յաւիտեան՝

Ոչինչ սիրող որտի վերայ

Բոնանալու ոյժ չունի:

Եւ որպէս մարմնացեալ յոյս կանգնում է բանաս-
տեղծի առաջ ո. Էջմիածինը՝ «անփառունակ ստրուկ երկրի»
այդ «լուսագեղ փարոսը» («Դարեց Եկան» բանաստ.),
տարագիր հօտի «արթուն ժողովողը» («Փրկութեան խաչը»
բանաստ.)—դա է մեր յուսոյ խարիսխը, որին դեռ Ժըպ-
տում է Լուսաւորչի կանքեղը՝

Ողջոյն ազգի կենդանութեան երաշխիք ...

Օ, այդ խորհրդաւոր լոյսը, մեր ազգի թշուառութեան
դարաւոր ուղեկիցը . . . Թող նա չմարի. Թող Արտաւազդի
մահաբեր շունչը նրան չհանգնի.

Զարկեցէք, դարբիններ, կըուանը սալին,

Զարկեցէք կըուանը—շղթայքն ամրանան,

Անիծեալ արքայի կապանքն ամրանան.—

Եւ ահա կարծես բացւում է քաղաք լուսաւոր վիւ-
ճակի ծիածան» . . . բայց դա ֆաթա—մորդանա է, անա-
պատի խարուսիկ օդերկոյթ, որ երազանքների հրապոյր-
ներով յաճախ մոլորեցնում է դիւրահաւատ ճամբորդին-
Ո՞ւր է այդ ծիածանը. ուր են նշանները ընդհանուր սիրոյ
և երջանկութեան, ազգի վերածնութեան. որդիքդ եկան

օգնութեան, ո՛ Մայր Հայաստան։ Հորիզոնը շառագունելէ, բայց ոչ թէ արշալուսի ճաճանչներից, այլ ահեղ խարուկից, որին զոհ են գնում և ժողովրդի արիւն-քրտինքի վաստակը, և ազգի յոյս՝ մատաղ ոյժերը. այս հորիզոնը շառագունելէ, բայց արեան դետերից, դահճի ծիածանից, «կարմիր ծիծաղից» . . .

Ինքը բանաստեղծն էլ տեսնում է, որ դա լոկ «երազ էր ցնորսամիտ» ու ողբում»

Աւազ ցնողքիս. գեռ մօտ չէ գարուն,
Ոչ ժանգն է ջնջուել մեր շղթաներից,
Ոչ մեր կուրծքըն է վարզով զարդարուն,
Ոչ այգն է ջոկուում խաւար գեշերից . . .

Գարունը կուղայ, բայց չնորհարեր Մայիսը գեռ. հեռու է. աշունը է տիրում թէ բնութեան մէջ և թէ մարդկանց սրտերում. Երկայն և ձիգ աշխատանք է պէտք փարատելու մեզ շրջապատող խաւարը. հարկաւոր է անաշառ գործունէութիւն ժողովրդի մէջ. հարկաւոր է փափկացնել մարդկանց կոշտացած սրտերը և հաղորդակից անել նրանց լուսաւոր գաղափարների, ազնիւ ձգտումների։ Հարկաւոր է գիւղացու նման արտը դուրս դալ, սուր խոփով պատռել հողի կուրծքը և պահ տալ այնտեղ գերբնական հատիկը՝ սիրոյ և եղբայրութեան, լուսոյ և ազատութեան։ Ճակատի տաք քրտինքով հարկաւոր է սոսգել նրան. որպէս զի ծլի ծաղկի և ոսկէ սաւոնով ծածկէ մեր արտը^{*)}։ Եւ այն ժամանակ այլ ևս տեղիք չի լինի ոչ լաց ու կոծի, ոչ յուսահատ յոռետեսութեան։

Այդ վեհ գաղափարը—աշխատել, կռուել, զոհուել մարդկային աւելի լաւ ապագայի համար—ոյժ և կարողութիւն է տալիս սգաւոր իդէալիստին չընկճուիլ կեանքի արհաւիրքների երեսից և իրսէնի Բրանգին յատուկ յամառութեամբ և Մարսէլիէզը յիշեցնող ոգևորութեամբ կրկնել։

^{*)} Տես Հատիկ ստանաւորը, որը սուս բանաստեղծ Կուցովի «Փեսա Պահար»-ն է յիշեցնում։

Դէպի վեր, դէպի վեր . . . Անվերջ է ուղիս.
Յոզնեցան բազուկներս՝ այս կռուումն անզօթ,
Սպառեցաւ և վերջին ոյժն էլ ծնկներիս —
Դէպի վեր, սարն և վեր քաջասկըտ զինուոր:

Աւելի կարծրանան թող այս սև ժայռեր,
Աւելի թող սպառնայ անդունդն ահաւոր,
Դեռ շունչ կայ քերանումս, շարժուում են ձեռքեր,
Դէպէ վեր, սարն լ վեր, ի՞մ արի զինուոր:

Դեռ հեռու է կատարն անսամպ ու յստակ, Բայց եթէ չը հասնենք այնտեղ մենք այսօր, Վաղն այնտեղ ենք անշուշտ, մերն է յաղթանակ— Դէպի վե՛ր, սարն և վե՛ր, անվեհեր զինուոր:

Ահա ուր է տանում մեզ, Յովհաննէս Յովհաննիսեանը, այս վհատ ու լքեալ օրերին:

ՄԻՆԱՍ ԲԵՐԲԵՐԵԱՆ